ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-15/6 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան << ------ >> << ------ >> **2015թ.**

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և << ---------- >> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն ----------, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***<<Չինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման սպասարկման>>*** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 3 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 4 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 3 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 6):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր ***գինը կազմում է ---------- (----------) ՀՀ դրամ:*** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 5 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ

ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր: Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ.

2) Կատարողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է --- էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N3, N4, N5, N6 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն ք.Երևան Նալբանդյան 13 Հ/Հ 900011556652 ՀՎՀՀ 02505511 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն ---------- (ստորագրություն) Կ.Տ	

Հավելված 1

<< ___ >> << ___>> 2015թ. ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ- 15/6

ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

1. Նախաբան

Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություններն իրականացվելու են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ՀՀ ԱՍՀՆ) սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում:

Նախագծի շահառու կողմ է հանդիսանում Ծառայությունը, որը ծառայությունների մատուցման արդյունքում պետք է իրականացնի Ձինվորական կենսաթոշակառուների «Ձին 2.0» տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ Համակարգ) հետագա արտադրական շահագործումը, ինչպես նաև ուժային համակարգում երկրորդ կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների գործերի տեղափոխումը Ծառայություն:

Ծառայությունում գործող Համակարգի ծրագրային ապահովման սպասարկման աշխատանքները, ինչպես նաև ուժային համակարգում երկրորդ կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների գործերի տեղափոխումը Ծառայություն պետք է ապահովել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում:

2. Անհրաժեշտությունը

Ներկայումս Համակարգը շահագործվում է Ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների և զարգացման և Կենսաթոշակային ապահովության և նպաստների վարչություններում, ինչպես նաև հետևյալ 7 մարմիններում՝ (այսուհետ՝ համապատասխան մարմիններ)

1. ՀՀ Պաշտպանության նախարարություն.
2. ՀՀ Ոստիկանություն.
3. ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն.
4. ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկ.
5. ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայություն.
6. ՀՀ ԱԻՎ նախարարության փրկարար ծառայություն.

7. ՀՀ Դատախազություն:

Առկա Համակարգը նախատեսված է զինվորական կենսաթոշակների և զինվորական ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրվող ամենամսյա պարգևավճարների, պատվովճարների նշանակման, վերահաշվարկման և վճարման գործընթացներն ապահովելու համար:

Առաջադրանքի անհրաժեշտությունն է ստեղծել տեղեկատվական համակարգ, որտեղ կարտացոլվեն ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող սոցիալական ծառայություններից օգտվող բոլոր շահառուների, այդ թվում նաև՝ զինվորական ծառայողների և նրանց ընտանիքի անդամներին մատուցվող ծառայությունները:

3. Նպատակը

Սույն տեխնիկական բնութագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել առկա Համակարգի հիմնական տարբերակի արտադրական շահագործման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման, Համակարգի հիմնական տարբերակի արդիականացման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման սպասարկման աշխատանքները, ինչպես նաև ուժային համակարգում երկրորդ կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների գործերի տեղափոխման հետ կապված բոլոր աշխատանքների իրականացումը:

Սույն տեխնիկական բնութագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝

- Ծրագրային փոփոխություններ՝ Ծառայությունում գործող Համակարգում.
- Էլեկտրոնային տվյալների տեղափոխում (ուժային մարմինների ՏՇ-ից Ծառայությունում գործող Համակարգի ՏՇ)
- Նոր օրենքների, օրենսդրական ակտերի և ՀՀ կառավարության որոշումների ի հայտ գալու պարագայում համապատասխան փոփոխությունների իրականացում:

4. Համակարգի սպասարկման աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջները

Սպասարկման ծառայություն մատուցող ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Համակարգի սպասարկման աշխատանքները պետք է իրականացնի կապի կենտրոնական մեկ հանգույցի՝ Օժանդակման կենտրոնի (Service Desk) միջոցով:

Ընկերությունը Համակարգի սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական օժանդակությունը պետք է իրականացնի համաձայն 5x7 (շաբաթական 5 օր, օրական 7 ժամ) սկզբունքի:

Ընկերությունը Համակարգի սպասարկման աշխատանքները համակարգելու և իրականացնելու նպատակով պետք է հատկացնի ներկայացուցիչ՝ սպասարկման համակարգող գրավոր տրամադրելով Ծառայությանը նրա անունը, ազգանունը, հայրանունը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը:

Սպասարկման համակարգողը պետք է իրականացնի՝

- Համակարգի շահագործման ընթացքում առաջացած տեխնիկական հարցերի վերաբերյալ խորհրդատվություն (հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով).
- Ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում Համակարգի շահագործման ընթացքում առաջացած և համապատասխան ստորաբաժանման միջոցով ուղարկված տեխնիկական խնդիրների լուծում.
- Այլ:

Առկա Համակարգի հիմնական տարբերակի արտադրական շահագործման ընթացքում ի հայտ եկած խնդիրների և ուժային համակարգում երկրորդ կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների գործերի տեղափոխման հետ կապված աշխատանքների ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծում

Ծառայության ներքին իրավական ակտով նշանակված՝ Ծառայության պատասխանատու աշխատակցի կողմից հեռախոսով հայտնած (համակարգի շահագործման ընթացքում ի հայտ եկած) խնդիրների համար Ընկերությունը պետք է տրամադրի առաջնային օգնություն հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով: Եթե խնդիրը հնարավոր չէ լուծել հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով, ապա այն պետք է փոխանցվի աջակցության երկրորդ մակարդակ:

Խնդրի հրատապությունը սահմանված է ստորև.

Հ/Հ	Սրության մակարդակը	Պատահար
1.	**Հրատապ/ Սրություն 1**	Համակարգը չի աշխատում, բոլոր գործառույթները հասանելի չեն
2.	**Բարձր/ Սրություն 2**	Հիմնական գործառույթները պատշաճ կերպով չեն աշխատում/հասանելի չեն
3.	**Միջին/ Սրություն 3**	Երկրորդական գործառույթները պատշաճ կերպով չեն աշխատում/հասանելի չեն
4.	**Ցածր/ Սրություն 4**	Հիմնական գործառույթները պատշաճ կերպով չեն աշխատում/հասանելի չեն, ընդհանուր համակարգի շահագործման վրա ունեն նվազագույն ազդեցություն

Խնդրի հրատապությունից կախված պատասխանի և լուծման ժամկետները ներկայացված են ստորև.

Հ/Հ	Սրության մակարդակը	Արձագանքի ժամանակահատվածը	Կատարման ժամանակահատվածը	Սպասարկման ժամանակացույցը	Միջոցներ
1.	**Սրություն 1 /Հրատապ**	< = 1 ժամ պատասխանի համար	<= 8 ժամ լուծման կամ թերությունը շրջանցող լուծման տեղադրման համար	10.00-ից մինչև 17.00-ը	• Հեռախոս • Էլեկտրոնային փոստ • Հանդիպումներ / խիստ անհրաժեշտության դեպքում/
2.	**Սրություն 2 / Բարձր**	<= 2 ժամ պատասխանի համար	<= 12 ժամ լուծման համար	10.00-ից մինչև 17.00-ը	• Հեռախոս • Էլեկտրոնային փոստ • Հանդիպումներ / խիստ անհրաժեշտության դեպքում/
3.	**Սրություն 3/ Միջին**	<= 4 ժամ պատասխանի համար	<= 2 օր լուծման համար	10.00-ից մինչև 17.00-ը	• Հեռախոս • Էլեկտրոնային փոստ • Հանդիպումներ / խիստ անհրաժեշտության դեպքում/

Հ/Հ	Սրության մակարդակը	Արձագանքի ժամանակահատվածը	Կատարման ժամանակահատվածը	Սպասարկման ժամանակացույցը	Միջոցներ
4.	**Սրություն 4/ Ցածր**	<= 1 օր պատասխանի համար	<= 5 օր լուծման համար	10.00-ից մինչև 17.00-ը	• Հեռախոս • Էլեկտրոնային փոստ • Հանդիպումներ / խիստ անհրաժեշտության դեպքում/

5. Առկա Համակարգի հիմնական տարբերակի արդիականացում

Առկա Համակարգի հիմնական տարբերակի (Major Version) արդիականացման համար նախատեսված աշխատանքների, ինչպես նաև ուժային համակարգում երկրորդ կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների գործերի տեղափոխման հետ կապված աշխատանքների իրականացման ժամանակացույցը պետք է տրամադրվի սպասարկման ծառայություն մատուցող Ընկերության կողմից՝ պայմանագրի կնքման ընթացքում: Ժամանակացույցում պետք է ներառված լինի սահմանված աշխատանքների իրականացման և դրանց արդյունքների ներկայացման ժամկետները:

6. Իրականացվելիք աշխատանքների շրջանակը

Առկա Համակարգի հիմնական տարբերակի, ինչպես նաև ուժային համակարգում երկրորդ կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների գործերի տեղափոխման հետ կապված բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել փոխհամաձայնեցված առաջնահերթություններով.

- Տեղափոխվող տվյալների ֆորմատի համապատասխանեցում՝ Ծառայության տվյալների ֆորմատին:
- Չվճարված գումարների տեղափոխում Ծառայություն՝ գրանցելով որպես անցողիկ գումարներ:
- Տեղափոխված գործերի արխիվացում՝ ուժային մարմինների ՏԾ-ում:
- Նոր օրենքների, օրենսդրական ակտերի և ՀՀ կառավարության որոշումների ի հայտ գալու պարագայում առկա Համակարգի հիմնական տարբերակում նախատեսվում է իրականացնել համապատասխան փոփոխություններ:

- Համակարգը շահագործող մասնագետների ուսուցում, ըստ պահանջի և անհրաժեշտության:

7. Ծառայությունների իրականացում

Ընկերությունը Ծառայության կողմից հաստատված ժամանակացույցով սահմանված ժամկետում իրականացնում է առկա Համակարգի հիմնական տարբերակի արտադրական շահագործման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման և Համակարգի հիմնական տարբերակի արդիականացման համար անհրաժեշտ սպասարկման աշխատանքները:

Ծառայության Տեղեկատվական տեխնոլոգիաների և զարգացման վարչությունը ի հայտ եկած խնդիրների կամ համակարգում չնախատեսված անհրաժեշտ փոփոխությունների համար հաստատված փոփոխության հայտերը ներկայացնում է սպասարկման համակարգողին՝ Ընկերության կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով՝ հայտի կատարումն ապահովելու համար:

8. Իրականացված աշխատանքների ընդունում

Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ Ընկերությունը Ծառայություն է ներկայացնում հաշվետվություն՝ ուղեկցող նամակով, և տվյալ ամսվա ընթացքում ստացված արդյունքները (անհրաժեշտության դեպքում նաև արտաքին կրիչով), իսկ առնչվող փաստաթղթերը և՛ էլեկտրոնային, և՛ թղթային տարբերակներով:

Ծառայության Տեղեկատվական տեխնոլոգիաների և զարգացման վարչությունը ապահովում է կատարված աշխատանքների վերաբերյալ՝ ներքին իրավական ակտով ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը և այդ մասին գրավոր տեղեկացնում Ընկերությանը: Ընկերությունը ստացված դրական եզրակացության հիման վրա ներկայացնում է հանձնման – ընդունման արձանագրությունը և հարկային հաշիվը երկուական օրինակներով:

9. Ընկերությանը ներկայացվող հիմնական պահանջները

Ընկերությունը պետք է ունենա՝

- տեղեկատվական համակարգերի նախագծման, ստեղծման, ներդրման և շահագործման առնվազն երեք հաջորդող տարիների փորձ.
- տեղեկատվական համակարգերի նախագծման, ստեղծման, ներդրման և շահագործման առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող բարձր որակավորմամբ մասնագետներ, հիմնական աշխատակազմում պետք է ներառված լինեն նաև սոցիալական ոլորտի մասնագետներ.

- նմանատիպ ծրագրերի իրականացման փորձառություն՝ հաջողված նախագիծ.
- ծրագրային ապահովման գործընթացի ներդրված և կիրառելի քաղաքականություն ու ընթացակարգեր.
- փոփոխությունների և ռիսկերի կառավարման ներդրված և կիրառելի քաղաքականություն:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ	
ք.Երևան Նալբանդյան 13	
Հ/Հ 900011556488	
ՀՎՀՀ 02505511	
ՀՀ ֆինանսների նախարարության	
գործառնական վարչություն	

ստորագրություն	
Կ.Տ	

Հավելված 1

«ԳԱԿ-**ՇՀԾՁԲ-11/6**» ծածկագրով

ընթացակարգի հրավերի
N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-15/6 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-15/6 ծածկագրով հայտարարված ընթացակարգի ---------- **չափաբաժինին** և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:
----------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

----------ի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

էլեկտրոնային փոստի հասցեն է՝----------:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

--- ---
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

_____2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/6» ծածկագրով ընթացակարգի հրավերի
N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-15/ 6 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-15/6 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, ինչպես նաև Ձեր կողմից տրամադրված ծանուցումը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

_____-ն

Գնման ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

Չափա-բաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Արժեքի հաշվարկ		Առաջարկված գին	
		Արժեք	ԱԱՀ-ն	թվերով	Տառերով
1	2	3	4	5	6
1					
2					
3					
ընդամենը					

* Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

_____ _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (տորագրությունը)

Կ. Տ.

_____2015թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3

<<--->> << --- >> 2015 թ.ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-15/6
ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

h/h	Գնման ենթակա ապրանքներ, ծառայություններ անվանումը	Չափման միավոր	Միավորի գինը /դրամ/	Գնումը նախատեսվում է 2015 թվականի ընթացքում		Ընդամենը	
				Քանակ	Գումար	Քանակ	Գումար
1	Զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	դրամ	X	1	X	1	X

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Ա. Միքայելյան

Հավելված 4

<<--->> << --->> 2015 թ. ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-15/6
ծածկագրով գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

	Գնման ենթակա ապրանքներ	Հոդված	Նախատեսվում է վճարել 2015թ.-ի պետական բյուջեի միջոցների հաշվին												Ընդամենը /դրամ/
			I-ին եռամսյակ			II-րդ եռամսյակ			III-րդ եռամսյակ			IV-րդ եռամսյակ			
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	Զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	4232	25%			50%			75%			100%			X

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Ա. Միքայելյան